ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/89

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
Բողոք բերող՝ «Էկսին» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր՝ «Էկսին» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Հարությունյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ռետինե ծածկույթների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Էկսին» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 27.09.2021թ.-ի ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնանշման հարցման, որի առարկան հանդիսանում է՝ ռետինե ծածկույթների ձեռքբերումը, բոլոր արձանագրությունները և հայտարարությունը՝ (15.09.2021թ.-ի, թվով երկու հատ և 17.09.2021թ.-ի մեկ հայտարարություն, մեկ արձանագրություն) փոփոխել, ներառելով «Էկսին» ՍՊԸ-ին համապատասխան ներկայացված փաստաթղթերի փաթեթը «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» գնման գործընթացին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 23.09.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 25.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/15558-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 27.09.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

28.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/89 համարի ծածկագիրը:

07.10.2021թ.-ին և 22.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 07.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.10.2021թ.-ին:

2. «Էկսին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էկսին» ՍՊԸ-ն 27.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«2021 թվականի սեպտեմբերի 22-ին բողոք էի ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարի անվամբ, 2021 թվականի սեպտեմբերի 25-ին ստացել եմ գրություն, համաձայն որի պետք է նշվեր պատվիրատուի հասցեն, գնման ընթացակարգի առարկան, բողոքի հստակ պահանջն և armeps.am համակարգի միջոցով ներբեռնված լինելու վերաբերյալ ապացույցը: Նույն գրությամբ ինձ տրամադրվել է 2 աշխատանքային օր սույն թերությունները վերացնելու համար:

Սույնով ներկայացնում եմ բողոքը վերոնշյալ տվյալներով:

1. Բողոքարկող՝ «ԷԿՍԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Աշոտ Հարությունյան, հասցե. ՀՀ, Շիրակ, Գյումրի 3101, Տիգրան Մեծի փող, 2/16:

2. Պատվիրատու՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան հիմնադրամ» (հասցե. ՀՀ, ք. Դիլիջան, Պարզ լճի 5, 24/1,26/1):

3. ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9 ծածկագրով գնանշման հարցում, որի առարկան հանդիսանում է ռետինե ծածկույթների ձեռքբերումը:

4. Պահանջը հանդիսանում է այն, որ անօրինական «ԷԿՍԻՆ» ՍՊ ընկերությանը դուրս են թողել գնումների իրականացման գործընթացից, չքննարկելով, մեժելով ժամանակին ներկայացրած փաթեթը, պատճառաբանելով իբրև իմ կողմից չի ներկայացվել գնառաջարկը, մինչդեռ գնառաջարկը, իմ կազմակերպության անվանումը իրենց մոտ երևացել է: Նույն օրը նիստի ժամանակ ինձ զանգահարել է քարտուղարը, հայտնել է, որ իմ կազմակերպության անվանումը և գնառաջարկը երևում է, այն համարվում է ամենացածր գնառաջարկը, սակայն քանի որ հայտը չի բացվում, խնդիրն էլ տեխնիկական է, դրա պատճառով մեր առաջարկը մերժվում է: Անմիջապես կազմել եմ դիմում հաձնաժողովի անունով, կցելով կրկին armeps.am համակարգում ներբեռնած փաթեթը և սույն համակարգից ստացված էլեկտրոնային հաստատումը, որ ողջ փաթեթը հաջողությամբ ներբեռնված է: Պահանջում եմ. մինչ օրս Պատվիրատու՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան հիմնադրամ»-ի կողմից ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9 ծածկագրով գնանշման հարցումը, որի առարկան հանդիսանում է ռետինե ծածկույթների ձեռքբերումը, բոլոր արձանագրությունները և հայտարարությունը՝ (15.09.2021թ.-ի. թվով երկու հատ և 17.09.2021թ.-ի մեկ հայտարարություն, մեկ արձանագրություն) փոփոխել, ներառելով իմ կազմակերպությանը համապատասխան ներկայացված փաստաթղթերի փաթեթով սույն գնման գործընթացին:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը հանդիսանում են ՀՀ գնումների մասին օրենքի 46-րդ 1-ին մասը, այն է՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարվելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոճման 41-րդ հոդվածի, եթե հայտերի բացման նիստի ընթացրում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրակերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը: Չնայած, որ չի կասեցվել

հանձնաժողովի կողմից նիստը, չի տրամադրվել ինձ անհամապատասխանությունը (չնայած իմ կողմից անհամապատասխանություն առկա չի եղել, այլ խնդիրը տեխնիկական է եղել, որի մասին ասել է նաև իրենց քարտուղարը, այսինքն իրենք իրազեկված են եղել, որ իմ կողմից ամեն ինչ ժամկետում և պատշաճ է տրամադրվել) վերացնելու օր, սակայն ես նույն օրը ողջ փաթեթը կրկին ուղարկել եմ Պատվիրատուի էլեկտրոնայն հասցեին: Վերոգրյալի ապացույցը հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ցուցադրվող՝ սպասարկվող armeps.am համակարգի կողմից ուղարկված էլեկտրոնային ծանուցումը:

Հատկանշական է նաև, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ կետն է խախտվել, այն է՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանրային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում, որը չի հրապարակվել ժամկետում: Ինչպես նաև խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հողվածի 9-րդ կետը, այն է հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանրային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում, որը ևս չի հրապարակվել ժամկետում: Կից ներկայացվում է բողոքարկման վճարը կատարված լինելու բանկային անդորրագրի լուսապատճենը:

Հատկանշական է, որ հանձնաժողովը 15.09.2021 թվականին կայացրել է մեկ արձանագրություն, որտեղ բացակայում է հայտի մերժման կետը, սակայն իմ դիմումը կից փաստաթղթերով ստանալուց հետո հաջորդ օրը 15.09.2021 թվականի նույն ժամի մատնանշմամբ արձանագրություն է ուղարկել, որտեղ ավելացրել է հայտի մերժման կետը, որը վերաբերվում է իմ կազմակնրպությանը, ստացվում է կեղծել է առաջին արձանագրությունը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնանշման հարցման, որի առարկան հանդիսանում է՝ ռետինե ծածկույթների ձեռքբերումը, բոլոր արձանագրությունները և հայտարարությունը՝ (15.09.2021թ.-ի, թվով երկու հատ և 17.09.2021թ.-ի մեկ հայտարարություն, մեկ արձանագրություն) փոփոխել, ներառելով «Էկսին» ՍՊԸ-ին համապատասխան ներկայացված փաստաթղթերի փաթեթը «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» գնման գործընթացին:

3. <u>«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 28.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/15766-2021 գրությամբ դիմել է «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Էկսին» ՍՊԸ-ի կողմից 27.09.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 30.09.2021թ.-ին թիվ 739/1 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

««Էկսին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ, հայտնում եմ, որ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմանդրամի կարիքների համար ռետինե ծածկույթների ձեռք բերման նպատակով կազմակերպած ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացումը տեղի է ունեցել սեպտեմբերի 15-ին էլեկտրոնային գնումների Armeps (www.armcps.am) համակարգի միջոցով: Armeps (www.armeps.am) համակարգում ակնհայտ երևում է ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների քանակը, որոնց մեջ է նաև «Էկսին» ՍՊԸ-ն: Համակարգում առկա է նաև այն գինը, որը մասնակիցը լրացրել է Armeps (www.armeps.am) համակարգում, սակայն համակարգում կցված չեն Հավելված 1-ը՝ Դիմում-հայտարարություն գնանշման հարցումանը մասնակցելու, Հավելված 1.1-ը՝ ամբողջական նկարագիր առաջարկվող ապրանքի, Հավելված 1.3-ը՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր և Հավելված 2-ը՝ գնային առաջարկ, որոնց հիման վրա գնահատող հանձնաժողովը պետք է կատարեր իր գնահատումը՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,

բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդո ւնվում համակարգում կցված՝ մասն ակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության վերոնշյալ կետը գնահատող հանձնաժողովը սեպտեմբերի 15-ին կայացած նիստում մերժել է «Էկսին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ինչ վերաբերում է «Էկսին» ՍՊԸ-ի այն պնդմանը, թե խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի ՀՀ-րդ հոդվածի 8-րդ և 34-րդհոդվածի 9-րդ կետերը, տեղեկացնում եմ, որ 33-րդ հոդվածի 3-րդ կետում նշված են կետեր, որոնք պետք է պարունակի հրապարակման ենթակա բացման նիստի արձանագրությունը («Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի 6 և 7 ենթակետերը՝ 6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և 7) տվյալներ՛ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ), որոնք ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9 ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը չի պարունակել, քանի որ հայտերից մեկում եղել է անհամապատասխանություն Հրավերի պահանջների նկատմամբ: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է, համապատասխան ժամկետներում մասնակցի կողմից կատարվել է շտկում, որը արձանագրվել է սեպտեմբերի 17-ին կայացած նիստում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 43-րդ կետի համաձայն՝ Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը՝ սեպտեմբերի 22-ին, հանձնաժողովի քարտուղարը Հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունները և նշված կետով պահանջվող մնացած բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել է հրապարակող մարմնին և մասնակիցներին: (Կից ներկայացնում եմ էլեկտրոնային փոստից արտատպված տարբերակները):»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/89 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար ռետինե ծածկույթների ձեռքբերման նպատակով 08.09.2021թ.-ին հայտարարվել է «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էկսին» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման նիստի օր է սահմանվել մինչև 15.09.2021թ.-ին ժամը 11:00-ն ներառյալ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.09.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Էկսին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը Armeps (www.armeps.am) համակարգում կցված չեն:

v. Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի:

vi. Բողոքներ քննող անձը 11.10.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/1/16601-2021 գրությամբ գրությամբ դիմել է Armeps համակարգը սպասարկող կազմակերպությանը և խնդրել է հայտնել արդյո՞ք հնարավոր է Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում չարտացոլվելու (կցված չլինելու) պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա անհրաժեշտ է հայտնել Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն:

vii. Ի պատասխան վերոնշյալ գրության, 14.10.2021թ.-ի ներկայացված գրությամբ հայտնել են, որ ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգում հայտերի վերբեռնելու/բեռնելու (upload/download) գործառույթն իրականացվում է հետևյալ կերպ՝ մասնակիցը իր լոկալ համակարգչի միջոցով կազմում է իր հայտը, փաթեթավորում է հայտերի փաթեթավորման գործիքով, որը ևս ներբեռնվում է համակարգից համակարգչի մեջ և, օգտվելով ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգից բեռևված գործիքից, այնուհետև վերբեռնում համակարգ: Այս գործընթացի արդյունքում հայտի փաթեթը կոդավորվում է անվտանգության նկատառումներից ելնելով:

Հայտերը համակարգի տվյալների բազայում պահվում են կոդավորված վիճակում՝ դարձյալ անվտանգության նկատառումներից ելնելով: Հետագայում հայտերը բեռնելիս

ապակոդավորվում են ապակոդավորման բանալու միջոցով: Այս ողջ գործընթացի աշխատանքի վրա համակարգը սպասարկող ընկերությունը որևէ վերահսկողության կամ դիտարկման հնարավորություն չունի:

«ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գևաևշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Էկսին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտի փաթեթը պատշաճ կերպով ապակոդավորվել և առկա է ARMEPS համակարգում, սակայն այն դատարկ է առկա է միայն XML ֆայլը, որը ավտոմատ գեներացվում է հայտի փաթեթը կազմելու գործընթացի ժամանակ: Ներկայացված հայտում բացակայում են անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Քանի որ հայտի փաթեթավորման ողջ գործընթացը տեղի է ունենում մասնակցի համակարգչում, ապա սպասարկող ընկերությունը չի կարող հետևել, թե արդյոք վերբեռնման ընթացքում ճիշտ քայլեր են իրականացվել, թե ոչ և/կամ անհրաժեշտ փաստաթղթերն ամբողջությամբ կցվել են, թե ոչ:

Փաստում ենք, որ նշված ժամանակահատվածում համակարգն աշխատել է անխափան, մասնակցի կողմից հայտի վերբեռնման ժամանակ համակարգից ավտոմատ ծանուցումը՝ հայտի հաջողությամբ վերբեռնման մասին ուղարկվել է, քանի որ հայտը հաջողությամբ վերբեռնվել է, սակայն համակարգը հնարավորություն չունի ստուգելու վերբեռնվող փաթեթում առկա փաստաթղթերի բանակը և բովանդակությունը, հետևաբար, հայտի դատարկ լինելու փաստը հայտնի է դառնում միայն հայտերի ապակոդավորման ժամանակ:

viii. https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Էկսին» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթը բացակայում է, որևէ ֆայլ կցած չէ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Էկսին» ՍՊԸ-ի կողմից 27.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից հաստատած դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար ռետինե ծածկույթների ձեռքբերման նպատակով 08.09.2021թ.-ին հայտարարված «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.09.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության

3-րդ կետով արձանագրվել է, որ «Էկսին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը Armeps (www.armeps.am) համակարգում կցված չեն, ինչով պայմանավորված նույն արձանագրության 5-րդ կետով Հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը՝ համաձայն Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի:

Բողոքներ քննող անձը 11.10.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/16601-2021 գրությամբ գրությամբ դիմել է Armeps համակարգը սպասարկող կազմակերպությանը և խնդրել է հայտնել արդյո՞ք հնարավոր է Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում չարտացոլվելու (կցված չլինելու) պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա անհրաժեշտ է հայտնել Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն:

Ի պատասխան վերոնշյալ գրության, 14.10.2021թ.-ի ներկայացված գրությամբ հայտնել են, որ ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգում հայտերի վերբեռնելու/բեռնելու (upload/download) գործառույթն իրականացվում է հետևյալ կերպ՝ մասնակիցը իր լոկալ համակարգչի միջոցով կազմում է իր հայտը, փաթեթավորում է հայտերի փաթեթավորման գործիքով, որը ևս ներբեռնվում է համակարգից համակարգչի մեջ և, օգտվելով ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգից բեռևված գործիքից, այնուհետև վերբեռնում համակարգ: Այս գործընթացի արդյունքում հայտի փաթեթը կոդավորվում է անվտանգության նկատառումներից ելնելով:

Հայտերը համակարգի տվյալների բազայում պահվում են կոդավորված վիճակում՝ դարձյալ անվտանգության նկատառումներից ելնելով: Հետագայում հայտերը բեռնելիս ապակոդավորվում են ապակոդավորման բանալու միջոցով: Այս ողջ գործընթացի աշխատանքի վրա համակարգը սպասարկող ընկերությունը որևէ վերահսկողության կամ դիտարկման հնարավորություն չունի:

«ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գևաևշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Էկսին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտի փաթեթը պատշաճ կերպով ապակոդավորվել և առկա է ARMEPS համակարգում, սակայն այն դատարկ է առկա է միայն XML ֆայլը, որը ավտոմատ գեներացվում է հայտի փաթեթը կազմելու գործընթացի ժամանակ: Ներկայացված հայտում բացակայում են անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Քանի որ հայտի փաթեթավորման ողջ գործընթացը տեղի է ունենում մասնակցի համակարգչում, ապա սպասարկող ընկերությունը չի կարող հետևել, թե արդյոք

վերբեռնման ընթացքում ճիշտ քայլեր են իրականացվել, թե ոչ և/կամ անհրաժեշտ փաստաթղթերն ամբողջությամբ կցվել են, թե ոչ:

Միաժամանակ տեղեկացրել են, որ նշված ժամանակահատվածում համակարգն աշխատել է անխափան, մասնակցի կողմից հայտի վերբեռնման ժամանակ համակարգից ավտոմատ ծանուցումը՝ հայտի հաջողությամբ վերբեռնման մասին ուղարկվել է, քանի որ հայտը հաջողությամբ վերբեռնվել է, սակայն համակարգը հնարավորություն չունի ստուգելու վերբեռնվող փաթեթում առկա փաստաթղթերի բանակը և բովանդակությունը, հետևաբար, հայտի դատարկ լինելու փաստը հայտնի է դառնում միայն հայտերի ապակոդավորման ժամանակ:

https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Էկսին» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթը բացակայում է, որևէ ֆայլ կցած չէ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ընթացակարգին «Էկսին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էկսին» ՍՊԸ-ն ներբեռնել է թերի փաթեթ, որի արդյունքում հայտի փաթեթը հնարավոր չէ բեռնել, որպես հետևանք բացակայել են հրավերով պահանջվող փաստաթղթերը, այդ թվում՝ գնային առաջարկը, որի բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա է մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էկսին» ՍՊԸ-ի կողմից 27.09.2021թ.-ի-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/89 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**